

Հ ՈՒՅ Մ 1183

Հրատարակված է՝ Զալ 30, Վիմ 35

(Ընդօրինակված է նաև Սանահնի քոթուկում, էջ 90—91)
Մեջ ենք բերում Զալ-ից

Ի թագաւորութեան վրայ Գէորգէի, Ես՝ Օրբէլեան Իւանէ սպասալարս, թոռն մեծին Իվանէ սպասալարին, եւ որդի Սմբատայ սպասալարին ըստ նախնեաց սովորութեան եկի ուխտ Մանահին սուրբ Աստուածածնիս, ուխտիս առաջնորդ էր Տուտէ որդի Գրիգոր եպիսկոպոսն, աեսի գլխատակս նախնեաց մերոց, որ մեր ամենայն գաւառքն՝ թէ՛ քաղաք եւ թէ՛ գիւղք, ազատօք եւ շինականօք յերանելի թագաւորաց եւ ի նախնեաց մերոց վախմ էր տւած սուրբ Աստուածածնիս, եւ նզովիւք փակած. մեք եւս նախնեաց մերոց հետեւելով մեր ամենայն գաւառքն քաղաքաւք, գիւղիւք, աղատաւք եւ շինականաւք վերստին վախմ տւաք սուրբ Աստուածածնիս. ով ոք յանդգնի եւ հանել ջանայ սուրբ Աստուածածնէս մեր տւեալ վախմ կամ թագաւորաց, կամ կաթուղիկոսաց, կամ եպիսկոպոսաց, կամ աղատաց, կամ շինականաց յժը հայրապետաց նզովեալ եղիցի, պատիժն Յուզայի եւ Կայենի առցէ, սուրբ Աստուածածնի խոռովանքին դայ, յաւձէն մինչև ի նեռն անիծած է, Քրիստոսի դատաստանին մեղ պարտական լինի եւ սեւերես: Ով որ մեր յիշատակարանն ջնջէ, ջնջեալ լինի ի դպրութենէն կենաց: Ամէն, եղիցի:

Սուրբ ուխտիս միարանքն խոստացան տարէն մէկ քառասունք պատարագ մատուցանել անխափան վասն քաւութեան մեղաց մերոց:

Տարբերեցում.— Քոր. կամ եպիսկոպոսաց-ից հետո ունի կամ իշխանաց, կամ ազգականաց:

Այս արձանագրութեան մասին Հար էջ 293-ում գրում է.

«... Եկեղեցու արևելյան պատի վրա, երկրորդ կամարի տակ, խորանի պատուհանից վերև կա մի արձանագրութեան՝ գրված ՈՒՅ թուին, որից կարդացվում է միայն «կաման Աստուծոյ...», քննարկածն եղծված է եւ չի կարդացվում:

185. Սանահին, սեղն անհայտ: Քաղում եւնի Քոթուկից

(էջ 73—74)

13-րդ դար

Հրատարակվում է առաջին անգամ

Կաման Այ, մեք՝ որդիք Բէկին եւ Սութլուին, թոռն Կուճիպարիին, ընծայեցի սր Ածածնիս եւ իմ մաւրս գերեզմանաց, զմեր որդին զՎարդանն որ տայ ճ լիար ձէթ ի սր Ածածինս. Ծ լիարն Ածածնին եւ Ծ լիարն իմ մաւր գերեզմանացն ամէն տարի անխափան: Եւ մի ոք իշխեսցէ խափանել զվերոգրելոց՝ իմոց կամ աւտարաց, որ գրեցաւ ի դուռն սր Ածածնիս, ամէն միարանացս եւ վկայութր մեծամեծացս, ազատաց Տաշրա: Թէ ով յադրգնի խափանել զտուրս մեր, նզովք առցէ յԱյ եւ յամ սրբոց: Գրցաւ գիրս յառաջնորդութր Ովանիսի եւ ի փակակալութի Սամուէլ վրին, ի փառս ամենասր երրորդութեան. ամէն: